

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԱՅՅԵՂԻԹՈՒԽ

ԵԿԵՂԵՑԵԱՅ ԳԵՒՂՅՈՒՔԵՅ Վ. ԵԱՂԱՎԻՒՆ ՀՕ. ՅՈՒ

ՇԱՄԲԱԿՈՅՑ:

(Ն-Դ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ)

Գեարմախանի է փոքրիկ զիւղ երեսուն և հինգ գերդաստանից բաղկացած: Բնակիչք սորա գաղթական են Պարսկաստանից երեսուն և հինգ տարի առաջ: Այս զիւղն և սորա շրջակայքն են անտառատեղի. բնակիչք հետզհետէ կոտորելով անտառն վարելատեղի են շինում իրանց համար, օդ տեղւոյս է առողջարար, և ունի այս զիւղը լաւ աղբիւր: Բնակիչք տեղւոյն չափազանց աղքատութեան համար մինչ այս օրս չեն կարացած շինել իրանց եկեղեցին, թէ և ունին քահանայ Տէր Սղէքանդր Տէր Զաքարեանն, բայց չունենալով եկեղեցին գնում են Աւանաշէն, և իրանց ամենայն հոգեոր օրէնքներն այն տեղի եկեղեցումն են կատարում: Մեք ժամ 12 ին առաւօտու երկուշաբաթի այն զիւղն մուտ դործելով իջևանեցաք ի տան Տէր Սղէքանդր Քահանայի Տէր Զաքարեան, և օրհնեալ ժողովրդեան և յորդորելով որ եկեղեցին շինեն, մեկնեցաք ի Ո-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ:

Գեարմախանից մինչեւ Ո-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ Առշանաշէն է քսան վերստաշափ հեռաւորութիւն. Ճանապարհն շատ հարթ է, և անտառի ծառերով ծածկուած. և ինքն Ո-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ-Ռ է շինուած մի տափարակափայր

տեղւոջ չորս կողմով անտառով պատած. բնակիչք զիւղի են բոլոր Հայազգին միհարից տւելի գերդաստուն, սոքա շատ ջերմեսանդ ժողովուրդ են և շատ հիւրասէր, ունին եկեղեցի փայտածածք, և կամենում են բնակիչքն նորն շինել կամարակապ, և արդէն իսկ քարն պատրաստած են շինութեան համար: Մեք իջևանեցաք այս զիւղի առաջաւոր իշխանի տան, որ անուանուում էր Քաղղասար Խւզբաշի: Այս իրան քրիստոնէական բարեպաշտութեամբ մեծ հիւրասիրութիւն ցոյց տուաւինձ և իմ հետ եղեալ անձանց: Տեղւոյն Քահանայն Տէր Ներաէս Տէր Քաղղասարեան շատ պարկեշտ և խոչեմ անձն լինելով ժողովրդեան շատ սիրելի էր եղել. և ես շատ ուրախացայ նորա բարեբարոյութեան վերայ: Այս զիւղումն զիշերեցաք, և յերեքշաբաթի աւուրի տօնի Յովակիմայ և Աննայի ծնողաց սրբոյ Աստուածածնի պատարագ մատուցաւ յեկեղեցւոջտեղւոյն. և յաւարտ պատարագին ըստ պատշաճի խօսեցայ խրատ. մատուցանելով իմ հրաժարական ողջոյն տեղւոյն բարեպաշտօն ժողովրդեան՝ մեկնեցաք ի Ո-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ:

Այս զիւղն չը այնքան հեռի և Ճանապարհն շատ աջողակ էր, յերեկոյեան ժամերգութեան ժամանակ հասանք այս տեղը և ուղղակի դիմեցաք ի սուրբ եկեղեցին, որ կառուցեալ էր կամարակապ և վանկածեմի բարձրաւանդակ տեղւոջ. նա ունէր իրան հիւսիսային կողմն մի պարտեղ պատած փայտեայ Ճաղերով. այս պարափեց իրան բարձրութեան համար երեսում են ահազին Կովկասեան սարեր գոտի կապած. երեսում են և գեղեցիկ անտառախիտ

դաշտերն և ձորերն և հովիտներն, որ Վապալու - մահալ է առվում: Օգոստոս ամսին այս դաշտն կարծես թէնոր է մտնում Մայիս ամսոյ մէջ. նա ամեն կողմով կանաչազգեստ է ներկայացնում իրան տեսանողի տէքին, և իրան միջով սողոսկում են առուակներ և կազմում են գետեր, որը առվում են Գետիլայ և Թռութիւն: Եյս գետակն ունի իրան սկիզբն այս կամեան սարերի ձեանց հալուածից և ուրիշ լերանց և սարի ստորոտից բղիսած աղբերներից: Առ գնալով մեծանում է և անցանելով Վանքաշն զիւղի հիւսիսային կողմոց և պատելով արևմտեան կողմով գնում է դէպ ի դաշտն և միանում է Կուր գետոյ հետ. բայց ամառնային ժամանակում բազում առուներով բաժանուած նա ուղանում է բոլոր դաշտի եղեալ զիւղացւոց այգեստանիք և արտորայք, և հաղիւ թէ բաւականանում է տեղւոյն դաշտականաց. գարնան շատ է բարձրանում, և տարածութիւն է ունենում երկու վերստաշտի:

Վանքաշն զիւղն իրան չորս կողմն ունենալով անտառներ, և ինքն լինելով շինուած մի բլրակի վերայ՝ ունի շատ առողջարար օդ, ունի լաւ ջուր. հողն տեղւոյն է բերրի: Բնակիչք են Հայազգի մի հարիւրից աւելի գերդաստուն: Եյս զիւղումն մեք զիշերեցաք տեղւոյն իշխանի Պարոն Յարութիւնի տանն, և սա մեծ հիւրասիրութիւն ցոյց ետ մեզ: Եյս զիւղի Տէր Մովսէս քահանայն գոլով ուսեալ Եկրսէսեան Հայոց Եղբային - Հոգեւոր դպրոցումն՝ շատ միմիմարեաց ինձ իրան արժանաւոր ժամանացութիւնով և սուրբ դրոց ընթերցանութիւնով. սա վարփում

էր ժողովրդի հետ շատ սիրազգացութիւնով, ուստի և նոցա յորդորած էր դէպ ի ջերմեռանդութիւն: Եյս զիւղի մերձակայ անտառներ ունին թռուունք կանչան դըղուածու, կաքաւ, թուրած, սալամբ, լոր ելն. ունին էրեք, ջելլրան, մարալ, կրիտար, գախկայ, և այլ այսպիսի վայրենի կենդանիք, գայլեր և արջերն էլ ի հարիէ այս անտառների զինաւոր բնակիներն են: Ենտառի ծառերն են ըստ մեծի մասին հաստարուն կաղնիք, և մրգաբեր տանձենիք, խնձորենիք ելն: Եյս զիւղի բնակչաց մատուցանելով Եստուածային օրհնութիւն մեր հոգեւոր առաջնորդութեան պարտականութեան համաձայն, չորեքշաբթի աւուր մեր ընթացք ուղղեցինք դէպ ի Վալակիայ զիւղն:

Վանքաշն զիւղից մինչ ի Վալակիայ է 7 վերստ հեռաւորութիւն. Վանքաշն Շամախու Հայոց վիճակի ծայրն է: Եյս զիւղից վերադարձեալ ուղղեցաք մեր ընթացք ի Վալակիայ, և օրն է հինգշաբթի:

Ժամ ութիւն առաւօտու Վանքաշնից գուրս եկած՝ տան և երկուսին հասանք ի Վալակիայ, և իջեանեցանք ի տուն Քահանայի տեղւոյն Տէր Գարրիելի Տէր Գասպարեան:

Եյս զիւղ է շինուած մի սարադաշտ տեղւոչ. ունի հարիւր եօթանասուն զերդաստուն. ունի փայտածածք եկեղեցի. ունի և երեք Քահանայ՝ Տէր Գարրիել, Տէր Կերսէս, և Տէր Արզիս անուն: Եյս զիւղի վարելահողերն պաղաբեր են: Մեծ պակասութեան և մեծ նեղութեան մէջ է այս զիւղն ջրի սակաւութեան մասին: Մի վոքրիկ աղբիւր կայ մի խոր ձորակի միջում,

և առեն մարդիկ և կենդանիք սորանով են կառավարվում շատ ու շատ նեղութիւնով : Այս աղբիւրն ինչպէս Աելովմայ աւազան՝ մարդկանց և կանանց բազմութիւնով զիշեր և ցերեկ լիքն են, և շատ աղջիկներ և կանայք երեկոյեան գնում են աղբիւրն, և մեծ զիշերին հաղիւ թէ կարողանում են վերադառնալ տուն, այնպէս անսասուն կայ, որ վեց ժամ այն աղբիւրի մօտ կանգնում է, և հաղիւ թէ կարողանում է մի փոքր ջուր խմել : Այս նեղութեան ես ականատես լինելով, շատ ցաւեցայ այն զիւղի բնակչաց վերաց. և որքան որ այս տեղ մնացի երկու օր՝ խիզճ էի համարում կուշտ ջուր խմել առ սակաւութեան: Ուսարներն և զոմշներն տասն և չորս վերստաշափ հեռի Գեօդչայն են տանում և ջրում են: Երեկոյեան և առաւտեան այս երկու հարիւրաւոր զերդաստունից հաղիւ թէ կարացի եկեղեցի դալ, մնացեալքն կամ ջրի էին աղբիւրն կամ անսանոց ջուրն էին տարած Գեօդչայ զիւղումն: Այս զիւղեց հինգշաբաթի զնացինք ի Բազարանով, որ է տասն և ութ վերստ հեռի ի Վալակիայից նորա արևմտեան կողմն, և ունի երեսուն և հինգ բնակիչ Հայազգի: Այս զիւղն շինուած է Գեօդչայի գետականց վերաց, և կառավարվում է նորա ջրովն: Տներն շինուած են մի բըռակ կազմուած հողակուտի վերաց: Ունին այս զիւղացիք լաւ այդիք ջրովն Գեօդչայի ափունքի տախարակ տեղուոջ, ցանում են և բրինձ, մեծ մասն խաշնարածութեամբ են պարապում: Ունին եկեղեցի, բայց չունին առանձին քահանայ: Այս զիւղումն անցուցանելով մի զիշեր, և յորդորեց ժողովրդեան՝ որ իրանց հա-

ւատին հաստատ մնան, խոստացայ առանձին քահանայ տալ ի միսիթարութիւն նոցա, և այնպէս յուրբաթի աւուր վերադարձեալ ի Վալակիայ և անտի զիմեցի յԱղջիւն յուրբաթի երեկոյեան ի 27 օգոստոսի և իջեանեցայ ի տան աեղւոյն քահանայի Տէր Աարգսի:

Ազայիւն է զիւղ կառ ուցեալ ի սարադաշտ աեղւոջ: Ունի բնակիչ Հայազգի յիսուն և հինգ զերդաստուն, ունի եկեղեցի փայտածածքը յանուն սուրբ Աստուածածնի կառուցեալ ժողովրդեան ծախսով: Այն զիւղումն զիշերն անցուցանելով առաւտեան ժամ տասին ուղեորեցաւք զիւղի Ուշաւ զիւղն, որ հեռի է յԱղյիշենէ երեք վերստ: Այս զիւղն ինչ ժամանակ մուտ էինք զործում ընդառաջ եղեն մեզ տեղւոյն ծերունաղարդ տէր Վիքայելքահանայն և նորա որդի տէր Յակովը իրան ժողովրդեան բազմութեան հետ՝ ինչպէս իրանց սովորութիւնն է, և այնպէս զիմեցաք յեկեղեցին: Եկեղեցումն հարկաւոր խրատն և օրհնութիւն տալուց յետոյ ժողովրդեան՝ հիւրբնկալեցաք յիշեալ քահանայի տանն երկու ժամ. և անտի զիմեցանք ի Ը Ա Վ Ա Ր Ե Վ Ա Ր Ե : Աւշտալն ունի վաժառուն զիւղաստուն, և զիւղն շինուած է անտառականիթ սարի գօտուոյ վերաց, ունի նորացն կամարակապ եկեղեցի շինած արգեամբ տեղւոյն ժողովրդեան և աշխատութեամբ տէր Վիքայել քահանայի: Ունի լաւ աղբիւր, և վարելահողն տեղւոյն շատ բերբի է, բայց մորեխի բազմութեան համար Պուղանի գաշտումն ընդ որ Կուր զետն անցանում, և միանալով Երասմայ Հայոց վետի հետը՝ թափվումէ Կասպից ծովն: Այս զիւղն շատ աղքատացել էր իրանց արտօ-

բայք ապականելոյ համար այս միջոցներից: Այս տարի գոհութիւն Աստուծոյ՝ աղաս մնացել մօրիխից սոցա արտօրայքն, և առատութեամբ էին հնձել. փոխ առած պարագելն տալուց յետոյ՝ բաւական ցորեան մնացել էր իրանց սննդեան համար:

Աւշալից մինչ ի Շուքուրչու նորշն լինում, տասն վերստ. ճանապարհն շատ գժուարին ելեէջով հանում, ի Շուքուրչու. մեք բազում նեղութիւնով անցանելով երբեմն հետեւակ և երբեմն ձիաւոր այս լեռնալին և անտառային ճանապարհն՝ երեկոյեան ժամերգութեան ժամանակ հասինք ի գիւղն Աղն Էտյըրամ նորշն, որ է կալուած Գասապար բեկի Քալեանց: Այս գիւղի համեստասուն Տէր Արիստակէս քահանայն մեծաւ պատուով տարաւ մեղ յեկեղեցին, ուր տեղ հարկաւոր այցելութիւնն անելուց յետոյ զիմեցաք ի մի թաղն նորա Շուքուրչու: Աշղբայրամ նորշնն է եօթանասուն Հայազգի գերդաստուն. և պարապում վարուցանիւ: Ունի լաւ սառնորակ աղբիւր ջրոյ. օդն տեղւոյն է առողջարար:

Մէր Շուքուրչէ զնալու պատճառն այնքան այցելութեան համար չէր՝ ո՞քան մի ամենակարեոր գործոյ համար: Այս գիւղն բաղկանում տասն և հինգ գերդաստանից անտառամլջ տեղւոջ շննած. սորա փոքրկութեան և մերձ լինելոյն համար Աշղբայրամին եկեղեցւոյ կարօտութիւն չի ունեցել յաւաջ. բայց տեղւոյն բնակիչ Աստուածատէր և բարեպաշտ պարոն ֆաւատ Խալապեան շարժելով դեպի ի քրիստոնէական ջերմեռան գութիւն իրան և իրան որդւոց պարոն Յօհաննիսի և Պետրոսի վաստակած արդիւնքով շննած է եկե-

ղեցի փայտածածք օրօրոցաձև շատ գեղեցիկ գրութեամբ. և եկեղեցւոյ հարկաւոր մատեանք և զարդք եկեղեցւոյն հոգացել էր իրան ծախքով. ամեն պատրաստութենով սա իրան օրհնեալ զաւակներով սպասում էր մեր զալստեան և եկեղեցւոյ օծութեան: Մէք ևս տեսանելով սորա հոգեկան ջերմեռանդութիւն, քահանայից և ժողովրդեան բազմաթիւնով շրջակայ զիւզօրեից ի 6 ժամու 28 ին Օգոստոսի եկեղեցական հանդիսիւ սուրբ Մեռոնն ածաք նորաշն եկեղեցումն, և ի 29 նոյն ամսոյ Գիւղի Պօտեոյ սուրբ Աստուածածնայ տօնի կիրակի օրն՝ ըստ ծիսի և արարողութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ՝ օծաք սուրբ եկեղեցին՝ և անուանեցաք սուրբ Կարապետ: Յաւարտ սրբոյ անմահ պատարազին ամենայն բազմութիւն հըրաւիրվեցան ի հացիկերոյթ պարոն ֆաւադի Արգստեան Խալապեանցի տանը: Այս օրս մինչև երեկոյ շատ ուրախութիւնով անցուցիւք. բայց երեկոյեան ժամն մեղ և բոլոր տեղւոյս Հայազգեաց դարձաւ սգոյ՝ լացի և ողբոց ժամ:

Ժողովրդեան բազմութիւնն չորս կողման հաւաքված նստած էին այս երեկոյեան, և տանուտէրն ջերմեռանդութիւնով պաշտումէր ամենին թէյ բաժանելով. առաջին բաժանն ես ազոխի ջրով շատ ախորժանաք ըմպեցի, և միւս բաժանն ևս նոյնպէս պատրաստած այնինչ կամէի ըմպել, ահա՝ իմ ծառայն գունաթափ մի պահարան Շամախու Հայոց Խօնախտորի կնքով ամբացած ինձ մատոյց. ես բազում դժուարութիւնով բացի այս պահարանն ինիքներն իրար կամած լինելու համար, և զարմացն այս էր՝ որ պահարանն ինքնիրան

կտոր կտոր էր լինում ձեռումն. և միջի կարմիր զմուռն սեւ էր երեւում: Պահարանի դրութիւնից սիրտս տրոփաց, արիւնըս սառեց: Այսպահարանից դուրս եկաւ երկու նամակը կնքունակ, մին էր Տփխիսեցի Աղեքսանդր Ծայշիրեանցից, և միւսն՝ Առքիսա վարդապետից Պարզեան ներկայ անդամից Կօնսիստօրիին Հայոց Վարատանի և Խմբեթի: Երկուսն ես ցաւօք սրտի յայտնումէին վշտալի մահն Վշտալի Վեհափառ Հայրապետին մերոյ Տեսան Տեսան Մատթէոսի Ըռաջնոյ և Ասպետի՝ որ պատահելէ ի յաւիտենական սուզ ազգի ի 21 Օգոստափի ի կ ժամին զիշերոյ: Կամակն կարդալիս ձեռներս թուլացան, և ես գրեթէ անզգոյ ընկողմանեցաց բարձի վերայ. ապա ուշաբերած սկսոյ լալ և ողբալ աղի արտասունքով ազգիս անզիւտ կորուսան. իմ ազգի հոգեւոր տիրոջ մեր եկեղեցւոյ, հոգեորականացս, և ազգի զլիից պակասին, լացի անմիջիթար մեր որբանալն բարերաւ Հօրից, որը որ իրան կեանք մեր եկեղեցւոյ փրկութեան համար ինիկց Հօր Բարձրելոյն, և մեք նորա ապերալստ զաւակներս ըշհասկացանք Դորա վերջնի խորհուրդը և կամք: Այն Երեմիայի նման նստած զլխարաց լաց էի լինում մինչեւ որ իմ չորս կողմի բազմականք թողին ինձի և գնացին դուրս պատճառն իրանալոյ իմ սգոյն. և ինչ ժամանակ նոքա ևս իմացան՝ մոռացան իրանց բոլորովին. և ողբոց սպարան ամեն մին գեղջուկն կազմեց իրան տունն: Եւ այսպէս այս զիշերն անցաւ մեզ վրայով շատ նշանաւոր հարուածներն: Հատ լաց լինելուց յետոյ երեւակայեցաւ ինձ հանգուցեալ Տէր Մատթէոս Կաթուղիկոսն. նա թուումէր թէ խօսումէր

ինձ հետ շատ ցաւալի. և ես լուռ կացած նորա նշանաւոր բաներին էի ականջ զնում: Եա վերջապէս զայրանալրով իմ հետ ելած մարդկան վերայ առանձնացաւ իրան մենարանումն, և գուռն փակեց ներսի կողմից, որ նշան էր միւսանգամ մեր երես ըստեւնելոյ և մեզ հետ չխօսալոյ: Ա եհափառի այսպէս վարուիլն մեզ հետ իմ սիրտս կճմէր, և բաց արի աչքս մութ օժաղում տեսի որ երազ է, և ես ի Ծուքուրչան եմ և ոչ թէ յԱջմիածին կամ ի Վեհարան: Եւ ինչ ժամանակ մտաբերեցի որ Լուսատու ճրագն Ազգի և բարերար ծնողն իմ այլ ես չե յաշխարհի, այլ ի զերեզմանի՝ սկսոյ անդրէն լալ ցառաւոտ լուսոյ: Եւ եթէ այս զիր գրած ժամանակս որպան եմ լաց եղել, սիրելի ընթերցող ինձ է յայտնի: Բայց ի՞նչ անենք, Քրիստոսի է հրաման: “Ո՛չ է պարտ ընդգէմ իրթանի աքացել,,,: Աստուած այսպէս կամեցաւ մեզի խրատել այժմ, ինչպէս որ Կերսիսի ժամանակն սկստահեցաւ: Խոնարհել պէտք է մեզ Կախախնամութեան կամաց, և աղաչել մահիթարիչ սուրբ Հոգին, որ ողորմի իրան հարսին լուսոյ Կաթողիկէ սուրբ Կաջմիածնի այրիութեան. և մեզ հարազատ որդւոց նորա հոգեորականացս և ժողովրդականացս Հայոց ազգի սրբութեան, և չթողու մեզի երկար ժամանակ մեր ապերախտութեան համար որբ և անտէր:

Տանուակէր մեզ հիւրընկալող պարոն Գաւատան իրան որդւոմն իմիասին ցաւակից լինելով շատ տիրութեամբ էին անցուցանում: Ես մատղիր էի մնալ այն տունն մի քանի օր և օգոյ ու ջրոյ բարելաւութիւնով որբախանալ. Բայց այս բօթ

մահու եղել ինձ պատճառ չմնալոյ աստ: Ուստի յ30 օգոստոսի զինի ճաշին մատուցանելով սոցա զեմ լիարերան օրհնութիւն դիմեցի ի Գ.էր+ զիւղն, որ է սարի ոտն շնուած հինգ վերստ հետի այս զիւղից:

(Մահացու է յաջորդ ամսաբիրու)

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻԵԼՆ ԿԵԸՆՔԻ ՏԱՐՐԵՐԸ, ԿՈՅՄ ՇՆԴՄ-ՆԱՀԻ-ՌԻ-ՆԵ-ՆԵ-ՌԸ և ՌԵՐ-ՌԻ-ՆԵ-ՆԵ-ՌԸ պյանդի սաստինելի հայուցուածութիւն (Ելք+անդր զիւցօրի և Ե-դու-ս շատը հասուղի). ապա մի համատօս խորհրդածութիւն մէջ զարդարուացնելու և մու-նէտն միջոցի վկայ:

Մեր կարդացող հասարակութեան մեծ մասը, մանաւանդ մեր ուսումնական դասը, եթէ այս բառը անտեղի չեմ գործածեր, չայերի ժողովրդական կեանքի հետ զրեթէ ծանօթ չէ: Մի կողմանէ այս մըտածմունքը զրդեց ինձ զրել այս յօդուածը, միւս կողմանէ հետաքրքիր երեաց ինձ յիշեալ երկու Եւրոպացի յայտնի ուսումնականների չայերի կեանքի վերայ արած զիտողութիւնների հետ ծանօթացնել մեր հասարակութիւնը:

Չայերի բարոյական կեանքը, նոցա ընտանեկան յարաբերութիւնները ճանաչող Եւրոպացի ճանապարհորդները զրեթէ միւնոյն խորհրդածութիւնները և նկատո-

զութիւնները կանեն: Մանաւանդ մինկատողութեան մէջ բոլորովին կհամաձայնին միմեանց հետ: *Եոքա կը պնդեն որ չայերը իրանց կեանքով ու վիճակով չըեից նման են: *Եոցա նման հին ժողովուրդ, նոցա նման սփոռուած երկրիս ամեն ուղղութեամբ, նոցա նման կրօնի պատճառաւահալածանքները կրած, նոցա նման արծաթաթակալ: (Երանի՛ թէ նոցա նման արծաթակալ ևս լինէին): Եւ իրաւ՝ ինչ հանգամանքների մէջ չայերը կապըն և ինչ միջոցներով նոքա իրանց կեանքը իրեւ հպատակ ժողովուրդ կապահովացնեն (վաճառականութեամբ) նման են չըեից: Բայց չայերը իրանց բարոյական կեանքի ուղղութեամբ ըստ իմ այնքան կը տարբերին չըեաներից, որքան իրանց միւս հարեան ազգերից: Եյնու ամենայնիւ այս խնդիրը վիճարաններու շատ ընդունակ համարելով, մի կողմը կը թողնեմ այն ապացոյցի կարօտ խօսքերով բաւականանալով, և կաշխատեմ այժմ շատ տեղբառ առբառ գրել յիշեալ ճանապարհորդների արած զիտողութիւնները չայերի կեանքի վերայ:

Գերմանացի զիտնական երկրագործ Ազեքսանդր Պետցօլդը, չայաստան պտըտօղ ուսումնական ճանապարհորդներից ամենանորը, այսպէս կը զրէ: չայերի վերայ*):

(*) Այս զիտնականը Ռուսահայաստանն է ճանապարհորդել Այս զիտքը՝ որից ես հետեւեալ նկատողութիւնները կը քաղեմ և որ Առվելասեաննահանգների բնապատմական, ժողովրդական տնտեսութեան և ժողովրդների բարքի և սովորութիւնների նկարագրութեան բովանդակութեամբ բաւականին հետաքրքիր է, կ'անուանի Տէր Կայութիւն երկու հատողի բաժանած: Այս զիտքը 1868 թուականին է ըստ տեսել: